	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	10RB PL 72-04	Էջ 1/4
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԼՈՅԱԼՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ		Խմբագրություն 3	
		Ուժի մեջ է 20.10.2016թ -ից	

- Լոյալության ծրագրին մասնակցում են սահմանված քարտատեսակներից օգտվող բոլոր ֆիզիկական անձ քարտատերերը (ներառյալ համատեղ և բացառությամբ Նվեր քարտերի),
- Լոյալության ծրագիրը տարածվում է և՛ գործող, և՛ նոր տրամադրվող քարտերի վրա:


Միավորների կուտակում

- Միավորները կուտակվում են հետևյալ սկզբունքով.

Միավորներ	Դեբետային քարտ՝ օվերդրաֆտի հնարավորությամբ				Վարկային քարտ՝ արտոնյալ ժամկետով			
	ArCa Classic/Cirrus Maestro/VISA Electron	Master Card Standard/VISA Classic	Master Card Gold/VISA A Gold	Master Card Platinum /VISA Platinum	Master Card Standard/VISA Classic	Master Card Gold/VISA A Gold	Master Card Platinum /VISA Platinum	VISA Infinite
Սկզբնական (Welcome points)	25	50	100	200	50	100	200	300
Անկանխիկ գումարներից (ներառյալ էլեկտրոնային)	1,000 ՀՀ դրամ = 1 միավոր ¹							
Հավատարմության՝ հաշվի բացման օրվանից								
1 տարի	25	50	100	200	50	100	200	300
3 տարի	50	100	200	400	100	200	400	600
5 տարի	75	150	300	600	150	300	600	900
10 տարի	100	200	400	800	200	400	800	1,200

- Քարտից քարտ փոխանցումների և կոմունալ վճարումների դիմաց միավորներ չեն կուտակվում,
- Չեղարկված գործարքների դիմաց կուտակված միավորները գրոյացվում են,


¹ Արտարժույթով իրականացված գործարքների դեպքում միավորները կուտակվում են հիմք ընդունելով քարտային հաշվին հաշվառված գումարի համարժեքը ՀՀ դրամով:

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	10RB PL 72-04	Էջ 2/4
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԼՈՅԱԼՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ		Խմբագրություն 3	
		Ուժի մեջ է 20.10.2016թ -ից	

- Անկանխիկ գործարքների դիմաց տրամադրվող միավորները կուտակվում են այն քարտի գծով, որով կատարվել է գործարքը,
- Բանկի կողմից վերոնշյալ սկզբունքների համաձայն տրամադրվող այլ միավորները (բացառությամբ անկանխիկ շրջանառության դիմաց տրամադրվող միավորների) մեկից ավելի քարտերի առկայության դեպքում ավելացվում են՝
 - եթե հաճախորդը տվել է համապատասխան հրահանգ, նշելով թե որ քարտի վրա կուտակել միավորները, ապա հաճախորդի կողմից ընտրված քարտին
 - եթե հաճախորդի կողմից համապատասխան հրահանգ առկա չէ, ապա ակտիվ քարտերից առաջին բացված քարտին,
- Կուտակված միավորները կարելի է փոխանցել միևնույն հաճախորդի մեկ քարտից մյուսին, ներառյալ նաև հավելյալ քարտին,
- Հավելյալ քարտի գծով կուտակված միավորները կարող են օգտագործվել հավելյալ քարտի քարտատիրոջ կողմից, ստորև նշված որևէ պորդուկտից կամ ծառայությունից օգտվելու դեպքում,
- Հավելյալ քարտի գծով կուտակված միավորները կարող են հավելյալ քարտի քարտատիրոջ կողմից փոխանցվել հիմնական քարտի քարտատիրոջը, որի դեպքում կուտակված միավորներից օգտվում է հիմնական քարտի քարտատերը,
- Վերաթողարկման կամ քարտատեսակի փոփոխության դեպքում կուտակված միավորները փոխանցվում են նոր թողարկվող քարտին,
- Քարտի փակման պահին առկա միավորները փակման պահից չեն կարող օգտագործվել,
- Կուտակված միավորներից ո՛չ Բանկը, ո՛չ հաճախորդը չեն կարող մարել հաճախորդի որևէ ընթացիկ պարտավորություն (սպասարկման վճարի պարտք, գերաձախս և այլն),
- Նախորդող 3 օրացուցային տարիների ընթացքում՝ հունվարի 01-ից դեկտեմբերի 31-ը կուտակված միավորները կարող են օգտագործվել մինչև հաջորդող (4-րդ) տարվա մարտի 1-ը: Մարտի 1-ի դրությամբ չօգտագործված միավորները զրոյացվում են:

Միավորների օգտագործում

Կուտակված միավորները կարող են օգտագործվել Ամերիաբանկի կողմից սահմանված հատուկ առաջարկներից օգտվելու համար:

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	10RB PL 72-04	Էջ 3/4
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԼՈՅԱԼՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ		Խմբագրություն 3	
		Ուժի մեջ է 20.10.2016թ -ից	


- Միավորները օգտագործվում են միայն հաճախորդի կողմից համապատասխան հրահանգի² առկայության դեպքում,
- Բանկային ծառայությունների դեպքում միավորները օգտագործվում են 1 միավորը = 1 ՀՀ դրամ սկզբունքով՝ ստորև նշված ծառայություններից օգտվելիս 100% զեղչ ստանալու համար,
- Նշված պայմանները տարածվում են նաև աշխատավարձային նախագծերի շրջանակներում արտոնյալ պայմաններով պրոդուկտներից օգտվող հաճախորդների դեպքում:

Հաճախորդը կարող է օգտվել ստորև ներկայացված բանկային ծառայություններից՝

- Ֆիզիկական անձ հաճախորդների արտարժույթով կամ էսքրոու հաշվի բացման միջնորդավճար,
- Նոր պատվիրվող քարտի տարեկան սպասարկման վճար (առաջին մեկ կամ մի քանի տարվա վճար, եթե տվյալ պահին հաճախորդի հասանելի միավորները բավարարում են մեկ կամ ավելի ամբողջական տարվա սպասարկման վճարի համար),
- Անհատական պահատուփի օգտագործման վճար (կիրառելի է ինչպես նոր անհատական պահատուփի տրամադրման, այնպես էլ ինքնաշխատ կերպով երկարաձգման դեպքում, եթե մինչ երկարաձգումը հաճախորդի կողմից տրվել է Լոյալության միավորների օգտագործման հրահանգ),
- Ֆիզիկական անձանց համար գործարքներ կատարելու իրավունքով Ինտերնետ-Բանկ համակարգի միանվագ վճար (կիրառելի է նաև դիտման իրավունքով Ինտերնետ-Բանկ համակարգից գործարքներ կատարելու իրավունքով Ինտերնետ-Բանկ համակարգի անցման դեպքում),
- Ծածկագիր գեներացնող սարքի/Ամերիա Թոքենի տրամադրման (կորցնելու կամ վնասելու դեպքում), կամ սարքի տեսակի փոխարինման վճար,
- Հեռախոսային բանկային ծառայության միացման միանվագ վճար:

Միավորների մասին տեղեկատվություն

² Լոյալության միավորների կուտակման և օգտագործման հայտ կամ Ինտերնետ-բանկ համակարգով ուղարկված համապատասխան հայտ:

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	10RB PL 72-04	Էջ 4/4
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԼՈՅԱԼՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ		Խմբագրություն 3	
		Ուժի մեջ է 20.10.2016թ -ից	

Հաճախորդը կարող է ստանալ առկա միավորների մասին տեղեկատվություն հետևյալ եղանակներից որևէ մեկով.

- Ամերիաբանկի Մասնաճյուղերից
- Ամսական ուղարկվող քաղվածքներից
- Կոնտակտային կենտրոնի միջոցով՝ քարտի գաղտնաբառով նույնականացման դեպքում: